

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՓԱՂԱՓԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՓՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ներկայ 1898 թվականի
Պուկարիոյ համար տարեկան 12 ֆրանկ
» » վեցամսեայ 6 »
Արտասահմանի » տարեկան 14 »
» » վեցամսեայ 7 »
ԿԱՆԽԻՎ ՎՃԱՐՆԵԼԻ

Շարանկ դրամ եռայլն դրկել հետեւեալ հասցեով
ԽՍԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԼՐԱԳՐՈՅ ՎԱՐՆԱ (ՊՈՒԼԿԱՐՈՒՄ)
Редакция на вѣстникъ
„Ирaвункъ“
ВАРНА (България).

Rédaction du journal
„Iravounk“
VARNA (Bulgarie)

Խնդրագրութեան ուղղեալ գրութիւնք
էս չեն դրկուիր եւ յարմար դասուած
ներք միայն կը հրատարակուին ամբողջովին
կամ մասամբ:
Ծանուցման տողը 20 սանթիմ. երեւ
թեւ աւելի անգամներու համար 20 0/0
գեղջ կը լինի, փոխարեւը կանխիկ:

ԾՐԱՆՈՒՅԵԱՑ

Արդէն շատ անգամ ըսուած ու
յեղ յեղուած բան մը կրկնած միայն
պիտի ըլլանք, յիշելով այստեղ թէ
մեր աղէտները մասամբ վերագրելի
են մեր շրջապատութեան պակա
սութեան: Սակայն այն այն ճշ
մարտութիւններէն է զորս կրկնել
միշտ օգտակար է, մեր դժբաղ
դութիւններէն փորձառական դա
սեր առած ըլլալու համար:

Ասկէ ետքը համոզուած պէտք
է ըլլանք թէ ժողովրդային շար
ժումներու առաջնորդները անպայ
ման պարտին շրջապատաց ըլլալ
ոչ միայն մեր ներքին վիճակին,
այլ եւ այն արտաքին հանգամանք
ներու մասին որոնք կրնան վճա
կան ազդեցութիւն ունենալ մեր
ազգային շանքերուն վերջնական
արդիւնքին վրայ: Այս արտաքին
հանգամանքներուն մէջ առաջին
տեղը կը բռնեն հայ ժողովուրդը
շրջապատող օտար, կիսավայրենի
տարրերը եւ մանաւանդ՝ Եւրոպայի
օրուան քաղաքականութիւնը: Ա
ռանց չափազանցութեան կարելի
է ըսել թէ մեր արդի խորունկ
վերքերը կը պարտինք Քիւրտին
եւ իրեն նմաններուն վայրենի բը
նազդներուն եւ Եւրոպայի մեզի
ծայրայեղօրէն աննպաստ քաղա
քականութեան: Ասոնց երկուքն ալ
նկատողութեան չափեր. քաղա
քականութեան մասին աւելի ճիշդ
կ'ըլլար ըսել թէ միջոցներ ու ժա
մանակ պակսեցան մեզի՝ անոր
թափանցելու, հետեւանքները մեզի
սորվեցուցին թէ ահագին սխալ
մըն էր այս, որուն կրկնութիւնը
կրնայ մեզ արագապէս եւ ճակա
տագրական անողորմութեամբ տա
նիլ գահավիժել կորուստի ան
դունդը:

Եթէ լուրջ շրջապատութեամբ
ուզենք գործել, անկարելի է որ
չի տեսնենք թէ Եւրոպական տէ
րութիւններէն մասնաւորապէս Ռու
սիոյ դիրքն ու ձայնն է որ միշտ
մեծագոյն կշիռը պիտի ունենան
հայկական խնդրոյն լուծմանը մէջ:
Մենք գրեթէ բոլորովին անտես
ըրինք այս էական կէտը: Մեր

դուցէ մեծագոյն սխալը այս եղաւ:
Արդիւնքը յայտնի է: Մենք չենք
կրնար ընդունիլ թէ Ռուսիա ուղ
ղակի դրդած ու քաջաբերած ըլլայ
թուրք կառավարութիւնը հայ ժո
ղովուրդը կոտորելու. միայն սա
ճշմարտութիւն մըն է որ ջարդը,
եւ միայն ջարդը, եթէ ուզէր, կրնար
մէկ խօսքով կասեցնել հայկական
կոտորածները:

Ուրեմն մեր փրկութիւնը կա
խումն ունի մեր ներքին պատրաս
տութեան հիմնական եղանակէն եւ
միանգամայն արտաքին հանգա
մանքներու մասին մեր իմաստուն
շրջապատութեան, որուն օրինա
կը կուտան մեզ ուրիշ, մեզմէ շատ
աւելի զօրեղ ազգեր եւ նոյն իսկ
կանոնաւոր բանակի տէր կառա
վարութիւններ:

Շրջապատութեան նորագոյն եւ
մեծագոյն օրինակը կարելի է նը
կատել ջարդին անակնկալ առա
ջարկը ընդհանուր գէնընկէցութեան
մասին: Չարածի գրիչներ յայ
տարարեցին թէ Ռուսիա վարնա
լով որ իր պատերազմական պատ
րաստութիւնները վերջացնելէ ա
ռաջ, հանգամանքներու անդիմա
դրելի բերմամբ, Չինի մէջ Անգ
լիոյ հետ աւանդաւոր կռուի բռնուե
լու վտանգին մէջ կը գտնուի, վը
տանգը հեռացնելու եւ ժամանակ
չահելու համար միայն մէջտեղ նե
տեց գէնընկէցութեան խնդիրը:

Ռուսիոյ բուն նպատակը եւ հա
շիւները ինչ որ ալ եղած ըլլան,
սա յայտնի է թէ իր սեփական
չահերուն օգտակար տեսաւ գէն
ընկէցութեան առաջարկի մը յու
զումը. Եւրոպական մեծ ու փոքր
տէրութիւններու արդի վիճակը ու
տրամադրութիւնները դիտեց ու
տեսաւ որ յարմար ժամանակն էր
առաջարկը ընելու. եւ իրօք բոլոր
տէրութիւնները, մէկ երկուքէն
զատ, շուտով համաձայնեցան մաս
նակցիլ գէնընկէցութեան խնդրոյն
համար գումարելի վիճակողովի մը:
Ռուսիա օգտուած էր իր շրջա
պատութեամբ:

Ազգի մը ճակատագրին վարիչը
ըլլալու յաւակնութիւնը ունեցող
ներ չնն կրնար իրենց կոչումին
բարձրութեան վրայ մնալ, առանց

շրջապատաց ըլլալու: արտաքին
հանգամանքներու մասին, որոնցմէ
կը շրջապատուի այն ժողովուրդը,
որուն ծառայելու կոչուած են:

Հայ ժողովուրդին գործիչներուն
համար ալ այսպէս է:

Անցաւ այն ժամանակը ուր նե
րելի էր կարծել թէ յեղափոխա
կան մասնակի շարժումներ կրնան
ստիպել զիւրանազիտութիւնը ա
կամայ հետեւիլ հայկական դատին
եւ լուծել զայն: Փորձը ցոյց տուաւ
որ մենք ալ անոր հետեւելու ենք,
գոնէ մինչեւ մէկ աստիճան:

Արտաքին հանգամանքներու նը
կատարութիւնը ա'լ անխուսափելի
հարկ մ'է մեզի համար:

Պ. ՅԵԼԻՔՍ-ԹՈՒՄՍԻ ՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Անկախութեան սէրը տղայոց մէջ.
Կարելի է արդեօք որ ուսուցիչները
կարողանան հնազանդեցնել աշակերտ
ները իրենց անձը պատկառելի ընծա
յիւով:

Բ.

Այսպէս, չափազանցութեան վա
խով, պարտի'նք ուրեմն ամեն տեղ
ընտանեաց եւ դպրոցաց մէջ մարի
նոր ծնած զգացումները: Այդ բա
նին վրայ որոյ մասին կը խօսի
Մօնթէնը, անշուշտ կը մտածեն
երբեմն այն դասատուները որոնց
համար դաստիարակութիւնը յար
դարանք մ'է: Խղճեցէք անկախու
թեան ոգին տղայոց սրտին մէջ,
վերցուցէք անոնցմէ ինքնուրոյնու
թեան գաղափարը, սպանեցէք ա
նոնց մէջ նախաձեռնութեան ար
գասաբեր եւ մեծայարգ ոգին, եւ այ
դու դանդաղեցուցած պիտի լինիք
աշխատութեան եռանդը եւ կամոց
կամաց պատճառ պիտի լինիք ան
հետաքննելու գիտակցութիւնը զոր
ունին եւ զոր պարտին ունենալ ի
րենց ուղղամտութեան եւ պատաս
խանատուութեան համար: Այն
ժամանակ թիւրեւ երեւութապէս
լաւ դպրոցականներ ունենաք, բայց
գիտէ՛ք արդեօք թէ որպիսի'ն Զոր
գիկներ կը պատրաստէք ապագա
յին համար:

Թիշինք աստանօր Սթենսլէի այն
խելացի խօսքերը, զորս շատ ան
գամներ նշանակած ենք. — «Եթէ

ձեր աղայքը վիճակուած են գերի
ներ լինելու, դուք տմենայն դիւ
րութեամբ կը վարժեցնէք զայնս
գերութեան՝ տղայութեան ժամա
նամ, բայց որովհետեւ ազատ մար
դիկներ պիտի լինին, որոնք ի
րենց առօրեայ կեանքը ուղղելու
առաջնորդներ չպիտի ունենան ա
մեն ժամանակ, դուք կարող էք
վարժեցնել զայնս ինքզինքնին մար
դելու եւ ուղղելու ցորչափ ձեր աչ
քին առջեւ եւ ձեր հսկողութեան
տակն են»: — Ըսել է կայ միայն
մէկ տեսակ դաստիարակութիւն որ
կը յարմարի ազատ երկիրներու,
եւ այդ դաստիարակութիւնն է որ
ազատ մարդիկներ կը պատրաստէ:
Արդ, ի՞նչպէս կրնանք հասնիլ այս
արդիւնքին, երբ մենք կաշխա
տինք ոչնչացնել անոնց մէջէն ա
զատութեան բոլոր սերմերը:

Մեր վերջին անգամ յայտնած
գաղափարին համաձայն պարտինք
ըսել թէ ուրիշ ժամանակներէ ա
ւելի այժմ կարեւոր է իր իսկա
կան արժանիքին եւ ուղղամտու
թեան չափին գիտակցութիւնը ու
նենալ, ոչ միայն կեանքի պայքա
րին մէջ պատուաւոր տեղ մը գը
րաւելու, այլ նաեւ առանց թերա
ցումի մեր պարտականութիւնը կա
տարելու համար:

Մենք պարտաւոր ենք պաշտ
պանել մեր եւ մեր սիրելի Հայրե
նիքի կենսական շահերը, պաշտ
պանել մեր կարծիքները ճարպիկ
իմաստակներու դէմ, հաստատա
պէս կառչիլ մեր հաւատալիքնե
րուն, երբ վստահ ենք անոնց ճշ
մարտութեան, եւ ոգորիլ բոլոր այն
յարձակմանց դէմ, որոնք մեզ ան
պատուելու նպատակ ունին. . . .
Բայց այս ամենը անկարելի պի
տի լինի մեր տղայոց համար, երբ
կտնուխէն նուաճած եւ ստրկացու
ցած ենք զայնս:

Ուրեմն անկախութեան սէրը
մարել ուզելը (անկախութեան սէր
ըսելով մենք պէտք է հասկնանք
ինքնամտածութիւնը, գործի մը
պատճառները եւ հետեւութիւնը
չափելը, ոչ թէ հասարակաց կար
ծիքին եւ մէկ հրամայական բառի
մը համաձայն շարժիլը, այլ շար
ժիլ առողջ եւ կորովի դատողու
թեան մը համաձայն, որպէս ան.

ձին տէրը, և որպէս անկախ անհատ.) մեր տղաքներուն աչնիւ և լաւագոյն զգացումները քանդելը զայնս ո՛չ թէ անհատներ, այլ շարժուն առարկաներ պատրաստել ըսել է: Այսպէս այս զգացումը փճացնելու աշխատիլը միակ հարց չէ, զոր մենք պարտինք գիտնալ, այլ պէտք է իմանանք թէ ի՞նչ պէս պէտք է խորշիլ անկէ երբ զէպի չափազանցութիւն կիրթայ, ուղղել երբ կը շեղի, և զօրացնել երբ կը տկարանայ, պահելով միշտ դաստառական հեղինակութիւնը, իր սկսած գործը բարի վախճանի մը հասցնելու համար:

Մ. Գնթունի
(Շարունակելի)

ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ Ի ՓԱՐԻՉ

Փարիզաբնակ ազգային մը ցաւօք կը գրէ մեզի թէ տեղւոյն աղքատ հայ ուսանողները այժմ չեն ստանար այն նիւթական օգնութիւնը, որ իրենց կը տրուէր երբեմն, այնպէս որ թշուառութիւնը բարոյապէս ալ սկսած է ընկճել զիրենք, վհատութեան մատնելով:

Նամակագիրը այս տխուր կացութեան գլխաւոր պատճառ ցոյց կուտայ կարօտ ուսանողներու ի նպաստ հաւաքուած դրամներու գործածութեան անյարմար և մինչև իսկ ապօրէն եղանակը, որ գործադրուել է կարգ մը անձերու կողմէն: Օգնելու պատրաստականութիւն ունեցող հարուստ և բարեկեցիկ ազգայինները տեսնելով այդ արարքը, բնականաբար ա՛լ տրամադիր չեն օգնելու և չեն օգնել, գոնէ փափագելի չափով:

Մէկ քանի զգայուն ուսանողներ այս կացութեան դարման մը ընելու գովելի փափագով, իրենց ընկերներուն հրաւէր կը կարգան ժողով մը կազմել և խորհրդակցիլ թէ՛ աղքատ ուսանողներու օգնելու և թէ՛ ընթերցարանի վիճակը բարելոցելու ու բոլոր հայ ուսանողներու մէջ ընկերական ոգին վերածարձելու մասին: Ուրախալի է որ այս նախաձեռնութիւնը յաջող ելքի մը կը յանգի: Կընտրուի վարչի ժողով մը որուն նախագահն է Տ. Վաղարշակ Սեբրովպեան, ներքին գեղազօրծ փարիզի պատըսպարաններու, որ ամեն ջանք կընէ իրեն և իր պաշտօնակիցներու յանձնուած պաշտօնին գոհացուցիչ գործադրութեան և աղքատ ուսանողներու վիճակին բարելոքման համար:

Նամակագրին հետ մաղթենք որ այս ջանքերը յաջող արդիւնքներով պսակուին:

Նամակագրին կարծիքով, խոհուն և գործունեայ հոգեւոր հովիւ մը կարող պիտի ըլլար փարիզի մէջ այսօրինակ խնդիրներու գոհացուցիչ լուծման ի նպաստ շատ կարեւոր դեր մը կատարել, մինչ այժման հովիւը իր թոյլ և ամեն

հովէ շարժող նկարագրովը անկարող է ժողովրդին օգտակարապէս ծառայել:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Մարտի 7, 7 սեպտ.

Աստուած համբերութիւն տայ չար հարս մը պահող ընտանիքին, և մեզ՝ Մարտի 7-իներուս, որ անաստ, անզգաստ տէրտէր մը ունինք:

Ամերիկայի նորընտիր առաջնորդը, Գեր. Սարաճեան Հայր, քաղաքս հասաւ: Քահանայն բարի գալուստ կը մաղթէ իրեն և միանգամայն կը յայտնէ իր և ժողովուրդի բաղձանքը՝ Եպիսկոպոսին պատարագը եւ քարոզը լսելու:

Եպիսկոպոսը սիրով կ'ընդունի առաջարկը որ համաձայն էր Վեհափառին պատուէրին:

Արմէնիայի խմբագրապետը որ ներկայ էր, կը յարէ թէ շատ ուրախ պիտի ըլլայ Մարտի 7-ին առաջին անգամ տեսնելու Եպիսկոպոսի մը պատարագը, ու իր թերթի տեղական բաժնին մէջ կը ծանուցանէ թէ Եպիսկոպոսը պիտի պատարագէ:

Երբ Գեր. Սարաճեան, փոխադարձ այցելութեան գնացած էր Արմէնիայի խմբագրապետին, յանկարծ քահանայն ներս կը մտնէ բարկացալով. «Ո՞վ ըսաւ որ քու թերթիդ մէջ գրես Եպիսկոպոսին պատարագելը. տէ՛ նայիմ, հոգաբարձու Ս. Կ. կ'ըսէ թէ՛ չորս հայի համար պատարագ պիտի ընէ, թէ՛ հոս ժամոց չեն տար, թէ՛ Եպիսկոպոսական զգեստ չունինք. եթէ այդ չորս հայեր կը փափաքին Եպիսկոպոսի պատարագ տեսնել, երբ Ամերիկա հասնին, շատ կը տեսնեն»:

Եպիսկոպոսը կը յայտնէ թէ ինք ըզգեստ ունի, ժամոցի ալ պէտք չունի, եւ թէ լոկ Վեհափառի հրամանը պիտի կատարէ:

Տխար Փորթուզական նախընթաց օրուան խօսակցութիւնը կը յիշեցնէ եւ քահանային կը զգացնէ իր անպատշաճ թիւացքը:

Հետեւեալ օրը հոգաբարձու Ս. Կ. բոլորովին անտեղեկ պատահածներուն՝ կուգայ պաշտօնապէս խնդրել Եպիսկոպոսէն որ հաճի պատարագել կիրակի եւ օրհնել ժողովուրդը:

Կիրակի առաւօտ, ժամը մինչեւ 11 կ'սպասէ Եպիսկոպոսը, մարդ չերեւիր, անհանդարտ ներս դուրս կ'երթեւեկէ, եկեղեցիին ո՛չ ճամբան դիտէ ոչ ալ հասցէն ունի:

Եկեղեցին շատոնց սկսուած է. հարիւրի մօտ ժողովուրդ Եպիսկոպոսին կ'սպասէ: Իզգայեցող կարգացուցաւ, Եպիսկոպոս չի կայ. երգեցողութիւնը յամր կ'ընթանայ:

Գեր. Գեորգ Մ. Վ. իւթիւճեան, համբերութիւնը հատած, քահանային կըսէ թէ ինչո՞ւ չերթար Եպիսկոպոսը քերելու, թէ այս ի՞նչ խաղ է:

Քահանայն կը ստիպուի երկու երկուստարդներ զրկել Եպիսկոպոսը եկեղեցի առաջնորդելու համար:

Վարդապետը իմանալով զայս, կըստիպէ քահանան երթալ ու անձամբ առաջնորդել Եպիսկոպոսը եկեղեցի:

Հոս ալ նոր տեսարան: Պատարագը կը մօտենայ. Եպիսկոպոսին սպասաւորող չի կայ:

«Աստուծոյ սիրոյն, հագուստներս բե՛ր» կը պրոպ Եպիսկոպոսը եւ ժողովուրդին դառնալով. «աս ի՞նչպէ՞ս տէրտէր կը պահէք» կ'ըսէ:

Դանդաղ, անհամ երգեցողութեան կը յաջորդէ պատարագը: Սարաճեան սըրբազան պատարագեց ու քարոզեց յուզուած:

Փ. Պօլիս, 31 օգոստ.

Երէկ, կիրակի, տեղի ունեցաւ Հայկաճ ընթերցարանի բացումը, որուն անդամները քաղաքիս տեղացի եւ գաղթական երիտասարդութեան կը պատկանին եւ որուն նպատակն է ազգային մտաւոր զարգացման նպաստել:

Այս նպատակին անարգել դիմելու համար ընկերութիւնը հարկ դատած է իր կանոնադրին մէջ որոշել թէ ինք ամենեւին առնչութիւն չը պիտի ունենայ յեղափոխական ընկերութիւններու հետ, եւ կուսակցութեան խօսքը պիտի չըլլայ ոչ ընթերցարանի, ոչ ալ լսարանին մէջ: Ընկերութեան անդամները միաձայն որոշած են համերաշխ ոգով գործել ամեն կէտերու մէջ: Ընկերութեան մէջ ամեն կուսակցութեան պատկանողներ կրնան մուտ գտնել:

Բայց ցաւով կը լսենք թէ կարգ մը անձեր սխալ մեկնութիւն տալով ընկերութեան նպատակին, երիտասարդներու միտքը կուգեն պղտորել եւ ընկերութեան յառաջդիմութեան արգելք ըլլալ: Ուստի պարտք կը համարիմ յետագայ կարեւոր կէտերը ճշդել հրապարակաւ:

Նախ՝ ընթերցարանի ընկերութիւնը քաղաքիս մէջ հաստատուած Դպրոցասիրաց ընկերութեան կամ Գրասիրաց Եղբայրութեան հետ առնչութիւն մը չունի, ոչ ալ անոնց հակառակ մի նըպատակ: Նորահաստատ ընկերութեան անդամներէն շատերը այս երկու ընկերութեանց ալ անդամ են: Միայն Դպրասիրաց Եղբայրութեան, որովհետեւ ցարդ լսարան, ընթերցարան կամ գիշերային դասարան մը չունի, աշակից եւ օժանդակ ընկերութիւն մը կազմած եղանք, ոչ թէ անոր հակառակ մարմին մը:

Երկրորդ՝ Ընթերցարանի ընկերութիւնը Շաբէ ընկերութեան հետ կը չփոթուի շատերէ, եւ նոյն իսկ կը յայտարարուի թէ ընթերցարանի ընկերութեան նպատակը յեղափոխական է: Այս կարծիքը բոլորովին անհիմն է եւ կը հերքուի ընկերութեան ընդհանուր կանոնադրի անփոփոխելի մէկ յօդուածով, որուն համեմատ ընկերութեան լուծուած ժամանակը՝ անոր գոյքերը եւ դրամը պիտի յանձնուին Փ. Պօլսոյ ազգային վարժարանին:

Երրորդ՝ Անհիմն է դարձեալ սատարածայնութիւնը թէ՛ ընկերութիւնը կազմողները անոնք են որոնք վարժարաններու բարեկարգութեան համար մէկ երկու դասատուներու օգնութեան թիւին կը պահանջէին: Ընթերցարանի ընկերութեան մէջ ազատ կերպով մուտ կրնան գտնել այո՛, երբեմն դասատուներու անկումը պահանջողներ, բայց անոնց չափ դարձեալ իրաւունք ունին անդամակցելու անոնց հակառակորդներն ալ: Ընկերութեան նպատակը դպրոցական մարմնային կազմութեան հետ յարաբերութիւն մը չունի, եւ մի անտեղի ու ֆլեասակար գործ է ընկերութեան անդամներու սրտերը վիրաւորել՝ յայտարարելով թէ պիտի խափանեն ամեն բարեկարգ ազգային հաստատութիւն: Իրողութիւնը ստոր հակառակը ցոյց պիտի տայ:

Չորրորդ՝ «Ետագէ՛մ կամ յառաջագէ՛մ» անձա՛ն անուանակոչութիւններու նորաձեւութիւնը ընկերութեան մէջ մուտ չէ գտած: Եւ եթէ կան մարդիկ որոնք չա՛մ մը կ'ըսպասեն խոսովութիւն ցանելէ, Փ. Պօլսոյ ընթերցարանի ընկերութեան նուիրական յարկին տակ ատանկները դործ չունին, եւ չենք յուսար որ իրենց բաղձանքին կարեւոր հասնիլ անոր մէջ մտնելով:

Հ. Ա.

Փ. Պօլսոյ Ընթ. Ընկ. մէկ անդամը տակամ ջանքերու առջեւ ամէն

Սօֆիա, 25 օգոստոս

Այստեղի հայ գաղութը տակաւ կըստուարանայ: Եկեղեցւոյ տոմարին համաձայն այսօր կը բաղկաւ 72 ընտանիքէ և 120 ամուրիներէ, ընդամենը մօտ 500 հոգի: Գրեթէ բաղդաւորութիւն մը կարելի է նկատել որ այստեղ բնիկ հայ տարր չի գտնուելով, անծանօթ է մեզի տեղացիի և դրսեցիի ինքնին անիմաստ խնդիրը, որ սակայն Պուլկարիոյ ուրիշ հայաբնակ քաղաքներու մէջ ժողովուրդային պառակտումներու այնքան սնունդ հայթայթած է ու տակաւին կը հայթայթէ:

Հայերու տնտեսական կացութիւնը Պուլկարիոյ ուրիշ տեղերու իրենց ազգակիցներու վիճակին հետ բաղդատմամբ լաւագոյն է այստեղ, եթէ նկատողութեան չառնենք Փ. Պօլսոյ, Ռուսոնքի և վառնայի գլխաւոր հայ վաճառատուները: Միեւնքանակ ծախող վաճառականներ չիկան արդէն այստեղ: Սօֆիայի բնակիչները առհասարակ կը բաղկանան խանութպաններէ՝, արհեստագէտներէ և զինուորական ու քաղաքային պաշտօնեաներէ: Մեր ազգակիցներուն մէջ կը գտնուին բժիշկներ, ճարտարագէտներ և ուրիշ մասնագէտներ, որոնք իրենց համար չէին կրնար Սօֆիայէ յարմարագոյն ասպարէզ մը ընտրել:

Հայերը այստեղ կաղմած են ընկերութիւն մը՝ գիշերային դասեր, ընթերցարան մը և լսարան մը հաստատելու նպատակով: Անցած ձմեռ սկսուած ու շարունակուած են գիշերային դասերը, որոնք յետոյ առժամապէս դադրած են գիշերներուն կարճնալուն պատճառաւ: Մօտերս բացուեցաւ ընթերցարանն ալ ուր առ այժմ միայն 6-7 հայ թերթեր կընդունուին և որ կը յուսացուի թէ պիտի զարգանայ տակաւ:

Վերջերս ընտրուեցաւ նոր թաղական խորհուրդ մը, որոյ անդամներու ձեռնհասութեան կըսպասուի ազգ. գործերու բարւոք մատակարարութիւնը և ազգ. չէնքերու կառուցման ծրագրին գործադրութիւնը որ իրօք զօրուոր ջանքերու և հոգատարութեան կալուստ ձեռնարկ մը պիտի ըլլայ:

Եկեղեցւոյ չըլափակին մէջ պիտի կառուցուին այդ չէնքերը, վեց խանութ, իւրաքանչիւրին վրայ մէկ մէկ բնակարանով (արաւթման): Միակ յարմար միջոցը կերեւայ չինութիւնները որքան կարելի է, նպաստաւոր պայմաններով յանձնել չէնքերու կառուցումը ստանձնող ընկերութեան մը, որ որոշ ժամանակ մը չէնքերուն վարձքը ինք առնելէ յետոյ, զանոնք պարտաւոր է վերադարձնել ազգին:

Աւելի դժուարալոյծ է եկեղեցւոյ և դպրոցին շինութեան խնդիրը, որուն լուծումը կը կարօտի հնչուն դրամի: Սակայն հաստա-

դժուարութիւն կը հարթուի ուշ կամ կանուխ :

Յուսանք որ թաղ. խորհուրդը, որուն ընտրութեան վաւերացումը մօտ օրեր կը սպասուի Պատրիարքարանէն՝ ունենայ գործը գլուխ հանելու հարկաւոր հաստատակամութիւնը և աշխատութեան զօհողութիւնը որ միացած ժողովուրդին բարի տրամադրութիւնն, ներու՛ն՝ անտարակոյս պիտի հասցնէ բաղձացուած նպատակին :

ՁԵԿՈՅՑ

Ծանօթ է արդէն հայ հասարակութեան թէ՛ ասկէ վեց ամիս առաջ, Շարժում թերթը զրպարտութիւններ հիտարակեց Տաւրուի խմբագրութեան դէմ, որոց նպատակն ու դիտումն էր բարոյապէս եւ նիւթապէս սպաննել թէ Տաւրուը եւ թէ իր խմբագիրը, ու թաղել զանոնք «գաւաճան», թուրք կառավարութեան կաշառուած, ազգապառու մատնիչ» ամենակեղտոտ անուններու տակ :

Տաւրուի խմբագրութիւնն բնականաբար չէր կրնար անտարբեր գտնուիլ այնքան ծանրակշիռ եւ տխրազդեցիկ ամբաստանութեան մը առջեւ. հետեւաբար ի հարկէն ստիպուած դիմում ըրաւ Պուլկար կառավարութեան եւ ըստ օրինի արդարութեան գործադրութիւնը պահանջեց անկէ :

Արդ՝ պատիւ ունիմ զեկուցանելու թէ՛ ըստ որոշման Վառնայի նահանգական բարձր գատարանին, դատավարութիւնը տեղի պիտի ունենայ առաջիկայ հոկտեմբեր ամսոյ 27 ին, երեքշաբթի օր, առաւօտեան ժամը 9ին :

Դատավարութեան մանրամասնութիւնք, իրենց յարակից պարագաներով պիտի հրատարակուին Տաւրուի մէջ՝ որ ի մօտոյ պիտի կրնայ վերսկսիլ ազնիւ բարեկամներու օժանդակութեամբ :

Տէր եւ խմբագիր Տաւրու լրագրի Յ. Չալոյեան Վառնա, 2 սեպտ. 98. Զէյթունցի

ԼՐԱՔԱՂ

—Ռուս կառավարութիւնը կը շարունակէ գրաւել հայ վարժարաններու անշարժ կալուածներն ու շարժական գոյքերը : Այսպէս՝ միայն Ախալքաղայի ռուս դպրոցական տնտէշը նոյն քաղաքի եւ իր երեք փոքր հայաբնակ գիւղերուն մէջ գրաւեց 37 հազար ր. արժողութեամբ անշարժ եւ շարժական գոյքեր :

—Հանրաժամութիւն հայ դերասան հանգուցեալ Դաւիթ Դուրեանի յուղարկաւորութեան հանդէսը շատ համեստ չքով կատարուած է Թիֆլիսի մէջ, օգոստ. 23ին : Հանդէսին ներկայ էին բազմաթիւ զարգացած հայ երիտասարդներ, մինչդեռ հարուստ դասակարգը իր բացակայութեամբ կը փայլէր Դերասանական շրջանակներէ զրկուած վեց պատկերներու տեսքով : Դաւիթը միայն Արտաստանուցան երկու դամբանականներ :

—Երկու գերմանացի գիտնականներ, հնագէտ-պատմաբան Վալտեր Պէլքե եւ հնագէտ-լեզուագէտ Գառլ Լէման որ գիտական հետազոտութիւններ ընելու նպատակաւ Արեւելքի մէջ ճամբորդութեան մը ձեռնարկած են, Պարսկաստան այցելելէ յետոյ, անցած են Թրքահան

յաստան, Վան եւ ուրիշ տեղեր իրենց մասնագիտական հետազոտութիւնները շարունակելու համար :

—Մշակի մէջ կը կարդանք.

«Բագուից մի պարոն ուղարկել է մեզ հետեւեալ նամակը. «Վերջին ժամանակները յաջորդաբար հանդէս են դրվում զանազան պատկերներ Պետրոսեանի եւ Մալխասեանի մագաղիններում : Այդ բազմաթիւ պատկերների մէջ, որոնք երիտասարդ Արսէն Մէլիք-Շահնազարեանի վրձինի արդիւնքն են, առիթ ունեցանք տեսնել բուն հայկական կեանքին վերաբերող մի քանի նիւթեր. նկարիչը բաւական աջող ըմբռնել է մեր նշանաւոր բանաստեղծների հոգեկան տրամադրութեան այն րօպէները, երբ նրանք նուագել են իրանց անմահ երգերը, այն է՝ «Զայն տուր, ո՛վ ծովակ», «Արաքսի արտասուք», «Պանդուխտ հայ պատանեկի երգը» եւ այլն : Բիշ հետաքրքիր է եւ «Կուժը կոտորվեց» պատկերը, որը ներկայացնում է երեւանի գաւառի գիւղերից մէկի անկիւնը, ուր հրաշալի ծառապատ ըլլակի տակից հոսող առուակի մօտ՝ հայ գեղջիկուհին տխուր նստած, այլ եւս չէ կարողանում պարզերես վերադառնալ տուն, որովհետեւ կուժը կոտորեց՝ եւ այդպիսով առիթ տուեց իր ընկերուհիներին ընդմիջտ ակնարկել նրա թուլութեան վրա՝ «Կժով գնաց, անկուժ վերադարձաւ» : Պատկերները աջող են» :

—Տիգրանակերտի մէջ մեծ շքերով և խուռն բազմութեան մը մասնակցութեամբ կատարուեցին տեղւոյն նախորդ քաղաքապետական բժիշկ հանգուցեալ տօքթ. Պետրոս Չալուզեանի յուղարկաւորութեան հանդէսը : Բարեկիշատակ բժիշկը իր 18 ամեայ պաշտօնավարութեան շրջանին մէջ իր բարի և զթափառ գործերովը զբաւած էր ժողովուրդի համակրութիւնն ու յարգանքը, և իր դադաղին վրայ ամենէն աւելի լացողն եղած են աղքատն ու այրին :

—Պէլէնի (Հալէպի նահանգ) Հայերուն մէջ վերջերս կրօնափոխութեան շարժումներ երեւան ելած էին, բայց վիճակին առաջն. Տեղապահին ջանքերուն շնորհիւ այս շարժումին պատճառները մէջտեղէ վերցուած ըլլալով, կրօնափոխները վերադարձեր են հայ եկեղեցւոյ ծոցը :

—Դարձեալ գերիզմանատան խընդիր, Պոլսական թերթեր կը ծանուցանեն թէ Օրթոդոքս թաղ. խորհուրդը կուզէ գիւղին հին և անգործածելի գերեզմանատունը ծախել թուրք կառավարութեան : Տարակոյս չի կալ որ օտարազգի և անծանօթ շրջանակնեւ թաղ. խորհուրդին ներշնչուած է այս փափաքը ազդու միջոցներով, խընդիրը նկատողութեան առնուած է խառն ժողովի մէկ նիստին մէջ, որուն կ'ատենապետէր Յարութիւն փաշա, սակայն վերջնական որոշումը յետաձգուած է : Եթէ կեդր. վարչութիւնը որոշէ գերեզմանատունը տալ կառավարութեան, նշիցեալներու օսկորները պիտի փոխադրուին՝ գիւղին նոր գերեզմանատունը : Գերեզմանատան փոխարէն առնուելիք գումարով թաղ.

խորհուրդը մտադիր է եկեղեցիին և դպրոցին կալուածներ շինել :

—Ատրի նեստորականներու ռուսացումը յաջող ճամբու մէջ է : Նորագործ Մարիոն եպիսկոպոսի մէկ քահանայի և մէկ վարդապետի հետ Դաւրէթի մէջ մուտքը հանդիսաւոր եղած է ռուս հիւպատոսի նախաձեռնութեամբ : Կառավարական մարմիններ, ինչպէս և ռուսահայատակ հայերու մեծ մասը, կաթօքով և ձիերով քաղաքէն բաւական հեռու դիմաւորեցին եւ կալուկոպոսը և իր ուղեկիցները :

ՀԱՅ ՄԱՍՆԱԳԻՏՆԵՐ

—Բիւզանդիոնի մէջ կը կարդանք Փարիզի հայ ուսանողներու եւ արուեստագէտներու շարք մը, որոնք իրենց յաջողակութեամբ փայլուն ազագայ մը կը խոստանան. Տ. Նշան Զարիֆեան, Սարգիսիկ, Տ. Աղանեան, Վանցի, եւ Տ. Արշակ Թագուորեան, Կ. Պոլսեցի որոնք իրենց թիգերը պաշտպանելով Տօքթօրի աստիճան ստացած են փարիզի բժշկական վարժարանէն : Իսկ Տ. Արշակ Ալլահաբեկեանց Ռուսահայ, Նանսիի համալսարանէն բժիշկ ելած է, իր կարգին 55 աշակերտներէն այս տարուան միակ շրջանաւարտն ըլլալով : Տ. Մանուկ Զիլինկիրեան, Իզմիրցի, ստացած է Իրաւագէտ-փաստաբանի տիտղոսը, յաջողակ քննութիւն մը անցնելով : Տ. Յարութիւն Պէքեաբեան, Թէքիրտաղցի, Բարիզի էգօր Սանթրալի շրջանը աւարտելէ յետոյ, առաջին հայն ըլլալով յաջողեցաւ ընդունուիլ Ֆրանսայի Նաւայիի ճարտարապետական առաջին վարժարանը : Տ. Արամ Թահմաճեան, Կ. Պոլսեցի, կրցաւ Դեղարուեստից վարժարանին բազմաթիւ մրցողներուն մէջ առաջին հինգ յաջողակներէն մին ըլլալ : Տ. Միհրիմաթեանց, Կ. Պոլսեցի, աւարտեց էգօր Սանթրալի շրջանը :

Հետեւեալ զեղարուեստագէտներու նկարները ընդունուած են Փարիզի Սալոնին (տարեկան ցուցահանդէս պատկերներու, նկարներու, քանդակներու եւն.) մէջ. Տիարք Սարգիս Տիրանեան, Շապիւնեան, Է. Շահինեան եւ Զ. Զաքարեան որ արդէն ճարտար նկարչի համբաւ կը վայելէ եւ ֆրանսական կառավարութեան ստացած է Պատուոյ Լէգէոնի Ասպետութեան չքանշանը : Տ. Զաքարեանի նկարներէն մին կը գտնուի Փարիզի Լիւիսանպուր թանգարանին մէջ :

Այլեւսանարապօլսեցի Տ. Գաբրիէլ Ծաղիկեան Գերմանիոյ մէջ հնարեր է գութանը ելեքտրականութեամբ գործածելու եղանակը : Գերման թերթ մը կ'ըսէ թէ նոր մեքենային փորձը շատ լաւ յաջողած է : Հինգ անգամ աւելի մեծ տարածութիւն կը մշակուի անով քան մինչեւ այսօր գործածուող մեքենական գութանով :

—Հայ կոշիկակար մըն ալ, Տ. Գեորգ Մըխճեան, իզմիրցի, իր արհեստը կատարելագործելու համար տարի մը փարիզի կոշիկակարութեան վարժարանը յաճախելէ ետքը, նոյն վարժարանին մրցումին մասնակցեց և ստացեր է կօշիկ շինելու համար բաշխուած եօթը մրցանակներուն հինգերորդը, և կօշիկ ձեռնարկ համար տրուած եօթը մրցանակներուն չորրորդը :

ԹԵՐՔԻ ՍԻԼԱՅ

Մ Է Ս Է Լ Է Ս Ի

Րուս խարիճիյէ նազըրը Գօնթ կօլուխովսքի Զարըն թալիմաթը իւզըն՝ պիւթիւն տէվլէթլերին գապիւնէլերինէ կէօնտէրմիշ օլտըղը նօթա իլէ՝ անճագ պիւր հաֆթա ու մուրն տըգգաթընը օլ մուհէմ մէսէլէ իւզէրինէ ճէլպ իտէպիլտի :

Տէվլէթլերին պազըսը բէսմի վէ պազըլարը նիմ բէսմի սուրէթտէ թէրքի սիլահ թէքլիֆինի մէպտէն գապուլ իտէճէքլերինի պիլտիրմէքտէ իքէն, նակէահան Տըրէյֆիւս տավասը պիւթիւն Ֆրանսայը պիւր տահա շիտտէթլէ սարստը վէ սայիւր միլլէթլերինտէ նազարը տըգգաթընը Բարիսէ տօղրու ճէլպ իթտի : Տիկէր թարաֆտան ինկիլթէրա Սուտան ֆիթիւհաթլարը իլէ մէսըրուր ու մէշղուլ օլտըրա գթէրքի սիլահ մէսէլէսինէ ճէվապը գաթի վէրմէկէ շու սըրա բէք տիւշիւնէմէզ օլտու :

Կիրիտտէ Գանտիա իխթիլալը ումում պէօյիւք տէվլէթլերին տըգգաթընը պիւր տահա Շարգա տօղրու ճէլպ իտուպ, մէսէլէթ մուհիմ մէի շարգիյէ գաթիյէն հալլ օլըն. մաղ իսէ, սուհըր ումումի վէ եսախօտ թէրքի սիլահ մէսէլէսի սէմէրէսիզ գալաճաղընը տէվլէթլերէ տէրխաթըր իթտիրտի, իվլէթ, թէճէմմիւ օլընաճագ գօնֆէրանսա տա՝ սուհըր ումումիյի իխլալ իտէպիլէճէթ թիւքիա մէսէլէսի Ալգաս Լօրէն մէսէլէսի կիպի էն էվլէլ հալլ օլընմագ լաղըմ օլտըղընա տէվլէթլեր պիւր գաթ տահա գանաթ հասըլ իթտիլէր : Պու իքի մէսէլէնին հալլընտան տօլայը՝ գօնֆէրանսա թէճէմմիւ օլընմաղտան տէվլէթլեր միւպատէլէի էֆքեար վէ իսթիշարէ իթմէք եօլընտա իքէն, իմէրաթօրիցանըն գաթըլ հիւքիւտարլարը, բրէնսլէրի վէ վիւքէլայը տէհէթէկիզ պիւր հալա տիւշար իտուպ, թէրքի սիլահը ումումիտէն թէվլէլիւտ իտէն Ալգաս Լօրէն վէ Շարգ մէսէլէլերի շիմտիլիք մասալար իւզէրինտէ թէրք օլընտըլար : Նիհայէթ պիւթիւն տիւնեանըն մէսուտիյէթիւնէ եէնի պիւր եօլ աշմագ իշիւն մէյտանա աթըլան թէրքի սիլահ մէսէլէսի թէսաթիւֆի օլտըրա գալընը թէէլիւր իտէպիլէճէք՝ էնվաի միւշքիլաթա շիմտիտէն շարըլտըր իսէտէ, պուլար ազ կիւն զարֆընտա էհէմմիյէթլերինիզայպ իտէճէքլերինտէն, թէքրար հէր թարաֆտան տըգգաթլար օլ մուհիմ մէսէլէյէ աթֆ օլընաճաղը շիւքհէսիզ տիր :

Շիմտիլիք Ֆրանսա վէ Ալման տէվլէթլերինի եէքտիկէրինէ գարըլ խուսուսմէթլերինէ սէպէպի վահիտ օլան Ալգաս-Լօրէն էյալէթլերի իշիւն՝ Րուսիանըն միւրէվիճի էֆքեարը օլան Նօր կազէթասը տէմիշ տիր « պու էյալէթլեր իշիւն

Ֆրանսա վէ Ալմանիա պէյնինտէ պիր իթթիֆազ հոսուլա կէթի-րիպ տէ, քէնտի քէնտիլէրինէ ի-տարէ օլունուրլար իսէ հէր իքի աէվէթին պիրի պիրլէրինէ տիյէ-ճէկի գալմազ»։ Բուսիանըն խա-րիճիյէ նազըրը Ֆրանսա հիւքիւ-մէթինէ մէջնունիյէթպալսչ պիր իզահաթ վէրմիշ տիթ, պու իզա-հաթ Նօրըն հազարըր թարգտա պիր շէյ օլաճազը մէմուլ օլընը յօր։

Օ՝ հալտէ Շարգ մէսէլէսի իշին տախի թիւրքիա վիլայէթլէրինին սուրէթի ախէրլէ իտարէ օլընմա-լարը իգթիլա իտէճէք տիր, զիրա թիւրքիա հալը հազըրը իւզըն պը-րազըրը իսէ սուլհը ումուսիյի իխ-լալ իտէպիլէճէկինտէն, պէ հէմէ-հալ թիւրքիա էհալիսի խօշնուտ օլապիլէճէք թարգտա մուհիմ պիր թէպտիլաթըն իճրասը պէթլէնիլիր։

ԲՐՕԹԷՍԹԱՆԱՐ

Էվվէլտէն հազմը օլաղընը իւզըն էրմէնի բրօթէսթան վաիդ-լէրի կէչէն հաթթա Բուսուլազտա ումուսի վէ ալէնի պիր մէճլիս թէ-ճէմիւ իտուպ, Պուլկարիտա վէ քէօսթէնէտէ պուլընան միլլէթ-տաշարըմըր ճէհալէթ ու սէֆա-լէթտէն կէօնա վիգայէ իթմէք նիյէթի իլէ, պազը շէհրլէրտէ ժողովարանլար թէհսիս իտուպ, Ալլահըն քէշալընը էհալիյէ վազ իտէրէք, ճանլարընը ճէհէնէմտէն վէ թէնլէրինի սէֆալէթտէն գուր-թարաճազլար ըմըլ («»)։

Պու Պատուելիլէր պիր թարաֆ-տան էվրօքա վէ Ամէրիգա էհալ-լիսինին խայրխալըղընտան իսթի-ֆատէ իտէրէք, «տինսիլլէրի տինէ վէ իմանա կէթիլիյօրըր, աճ վէ չըպլազլարա նաֆազա վէ էլպիսէ վէրիյօրըր» [տէմէլլէ գանտըրուպ օրալարտան բարա չէքմէքտէ վէ տիլէր թարաֆտան վարնա, Բուս-ճուգ վէ քէօսթէնէ կիպի հալա-տար վէ սէրպէսթ շէհրլէր ին-թիլապ իտէրէք հաթթատա պիր իքի տէֆա էհալինին ճահիլ գըս-մընը պաշարընա թօրլայուպ պիր թազըմ էսկի վէ պալաթ քէլամ-լարլէ իպրապըր մէհարէթ իթմէք վէ կէօյա միլլէթտաշարըմըր կիր-տապը ճէհալէթտէն գուրթարմազ էմէլլէտէ պուլընը յօրլար։

Ֆազաթ ագսի օլարազ միլլէթ իշինտէ թէֆրիգալար հասըլ ի-տուպտէ, խայրէթ իշին ալաղը-լարը բարա իլէ միլլէթիմիլէք եհնի պիր գուլում հասըլ իտէյօրլար։ վէ պուտէ հալընը քէնտիլէրին իս-թիւրահաթլէ կէչինմէլէրի իշին տըր։ էկէր պու Պատուելիլէր միլ-լէթթէրվէր զաթլար իսէ, միլլէթ պէյնինտէ իթթիֆազ ու մուհապ-պէթ հուսուլա կէթիլէճէք եհրտէ թէֆրիգա հասըլ իթմէլլէր, էկէր բէք տինտար իտէլէր քիւրտլէր վէ թիւրքլէր իշինէ կիտուպ Ալլահըն ազիդ քէշալընը անլարա վազ իթ-սինլէր։ զիրա պիզիմ միլլէթին

եհնիտէն մէղհէպ վէ խիսթիյան-լըգ տէրսի ալմայա նէ իգթիլազը վար նէ տէ սըրասը։ պիզէ լաղըմ օլան տէրս պաշգա տըր վէ բէ'ք պաշգա։

Պատուելիլէր պու հարէքէթլէրի իլէ էվրօքա վէ Ամէրիգա էհալի-սինին խայրխալանէ իթթիլէրի էմիլլէթի սուի իսթիմալ իտէյօր-լար։

Վահագն

ԻՄԲԷՐԱԹՕՐԻՑԱՆԷԼԻԶԱՊԷԹ

Շու կիւնլէրտէ թէլէկրաֆլար վէ ճէրիտէլէր իմէրաթօրիցա է-լիզապէթին զաթլընտան վէ հաս ու մաթէմ էլաիմինտէն հալընը պահա իթմէքտէ տիրլէր։

Իմէրաթօրլար, գրալլար, Բը-րէնսէր վէ ճիւմհուրիյէթ ըհիւ-լէրի իմէրաթօր Ֆրանց ժօզէֆէ թէլէկրաֆլար քէչիտէ իտուպ, պէտպալաթ իմէրաթօրիցանըն զաթլընտան տօլայը քէտէր վէ թէհսիլէրինի պէյան իթմիլլէր տիր։ Իմէրաթօր իսթիլարըրը խիլաֆընտա օլարազ, շու մաթէմ-նազ կիւնլէրինտէ սըհէթտէ օլուպ, հիւքիւմտարլարտան գապուլ իթ-տիկի թէլէկրաֆլարա շախսէն քէն-տիսի ճէվապ վէրմիշ տիր վէ պու կիպի ըհսիմ վազիթէլէրինի իճրա իթմէքտէ իմիշ։ Իմէրաթօր բրէնս Լիլիսէնշտէն իլէ կէօրիլէմսինտէ միւքէտտէր պիր թարլլէ տէտի, «Այա անլայամալըմըր էօմիլն-տէ հիշ քիմսէյէ ֆէնալըք իթմէլլէն վէ հէք էլլիք հարան պիր գատընը նա'սըլ պիր էրքէք գաթլ իտէր»։

Պիւթիւն վիլէննա հաս էլամէթ-լէրի իլէ թէֆրիշ ու թէլլին օ-լընմըլ տըր։ Իմէրաթօր գըզլարը իլէ սէրայտաքի քիլիսէտէ ալիէնի բուհանիյէտէ հազըր պուլընտը։

Ժընէվտէ իմէրաթօրիցանըն ճէսէտի թապուտա վազ իթմէք ալիէնինտէ 30,000 էհալի հազըր օլուպ, տիլսուլ նիւմայիշտէ պու-լընմըլլար։ պու սըրատա պիր գաչ քիշի տէրտէսթ օլընմըլ։ Իմէրա-թօր Ժընէվ հիւքիւմէթինէ պա թէլէկրաֆ թէլէքքիւրաթընը պէ-յան իթմիշ տիր։

Պէրլինտէ սէրայը իմէրաթօ-րիտէ տէօրթ հաթթա հաս թու-թըլաճազ, Գաթիլ Լիւքէնի իթա-լիա թէպաասընտան օլմաղլէ, Պէր-լինտէ իքի կիւն իթալիալըլարա գարշը նիւմայիշտէ օլընուպ, գալ-կալար վուգու պուլմըլ վէ պիր բօ-լիս վէ պիր գաչ քիշիլէր հարէ-լէնմիլլէր վէ պազլարըր տէ թէվ-գըֆ օլընմըլլար։

Իմէրաթօր վիլհէլմ վէ Բուլէն վէ սըրպ գրալլարը քէզա Բուսի-ատան պիր բրէնս վէ սաիլ տէվ-լէթլէրտէն պազը պէօյիլը զաթ-լար իմէրաթօրիցանըն ճէնալէ-սինին թէլէի ըհսիլնտէ (յուզար-կաւորութիւն) հազըր պուլընմազ իշին վիլէննայա կէլէճէքլէր իմիշ։ Բէսիմ իլանա կէօրէ, բէրշէնպէ-տէն պու կիւնէ գատար Հոֆպուրկ-

տա միւթէվէֆանըն թապուտընա էհալի սէրպէսթ զիյարէթ իտէպի-լիր իտի։ պու կիւն սուրէթի մու-թանթանէտէ թապուտալալլէ Գա-բուցին քիլիսէսինէ նազլ օլունուպ, տէֆն օլընաճազ տըր։

ԿԻՐԻՏ

Գանտիտա գուհուրա կէլէն իս-թիլալ իւզէրինէ, հէր տէվլէթ կի-րիտտէ պուլընան գուլվիլէ ապէ-րիյէսինի արթըրմազտա տըր։

Բարիստէն քէչիտէ օլընան պիր թէլէկրաֆ ղաթիլալ Պուլֆանըն 800 ֆրանսըլ ապէրի վէ պիր զըրհը իլէ կիրիտ իշին հօլա չըգտըրընը պիլտիլմիշ տիր։

Սթանպուլտան ալընան պիր թէ-լէկրաֆնամէ տախի Օտէսատան 100 բուս ապէրի վէ 50 ժանտարմ ու գաթիլիլէնին վարօրա ըգդիպ-լէ հարէքէթ էթաիլլէրինի հազը-յօր։

Մըսըրտան տախի պիր ալալ-ինկիլիզ ապէրլէրի կիրիտէ միւ-թէվլէճէհիսէն հարէքէթ իթմիշ տիր։

Բուսիա տէվլէթի՝ կիրիտ վու-գուլաթընտան տօլայը՝ Լօնտա, Բարիս վէ Բօմա գապիլէլէրինէ պիրէր նօթա հօլալմըլ իտէտէ, պու նօթանըն միւնտէրէճաթը շիմ-տիլիք պիլիմէյօր։

Թաշաղըն Գանտիտան ալտը-ղը մալիւմաթա պիլնալէ, ինկիլիզ ամիրալը Գանտիա գօմանտանը էթհէմ ըաշայա՝ իսթիլալ սէպէ-պէպիլլէթ վէրէն միւսթիմէրի վէ շէհրին գալլէլէրինի 40 սաաթ զար-ֆընտա թէսիլմ իթմէսինի իսթար իթմիշ։

Ճէվաթ ըաշա ամիրալարըն թէլլիլաթընը խաֆիլլէթմէկէ չալըլտը իտէտէ, ըհտտ օլընտը։

Շիմտիլլէ գատար թօրլանըմըլ օլան էօլիւրի ինկիլիզ հիւքիւմէ-թինէ թէսիլմ իթմէք իշին Գան-տիա միւթէսարըրը թալիմաթ ալմըլ տըր։

Գանտիտան Գանտիայա եհնի-տէն առքեր հօլլանըլլօր։

Կիրիտտէ սօն վուգուլաթլար-տան միւթէզարիւր օլան խրիս-թիյանլարա թէվլի օլընմազ ի-շին Չար հազրէթլէրի 9000 բ-իանէ հօլլամըլ տըր։

Գանտիտա 3700 ինկիլիզ, 1000 ֆրանսըլ վէ 1000 իթալի-ալը ապէր մէվճուտ ըմըլ։

ՄԻԻԹԷՆԷՎ ՎԻԷ

—Ֆէլաւմէթու բուհնա Ֆէրտի-նանտ հազրէթլէրի՝ պու բէրշէմպէ կիւնիւ էօյլէնտէն սօնրա թրէնը մալսուլպէ վիլէննայա միւթէվլէճ-ճիսէն հարէքէթ իթմիշ տիր։

—Սպանիա մէճլիսի մէպուսա-նը տախի սուլհ բրօթօգօլընը գա-պուլ իթտի։ Իմտի Ամէրիգա վէ Սպանիա հիւքիւմէթլէրի պէյնին-տէ միւնազտ օլմասը լաղըմ կէլէն

միւնալէհէ ահտնամէսինի թանգիմ իթմէք իշին թարաֆէյնտէն կէօն-տէրիլէճէք մուրախալար հազը-նէն Բարիստէ լէճէմիւ օլընա-ճազլար տըր։

—Աստիլա իմէրաթօրիցանըն գաթիլի Լուքէնի տէմիշ տիր «է-կէր իթալիտա պուլընըր իսէ ի-տիմ, Գրալ Ումպէրթօյը գաթլ ի-տէճէքտիլմ»։ Ալըն մուհաքէմէսի թէնէվտէ ալէնէն իճրա օլընաճազ-մահէլին, նիզամը իտամա հիւքմ վէրէմէյուպ, գաթիլլէրի մուհպ-պէտէն քիւրէք ճէզասընա մահքիւմ իտէպիլլիր։

—Տրէյֆիւսըն տալասընա միւ-թէտալիլ էվրազը պուլնտան էվվէլ եհնի հարպիլլէ նազըրը թէտղըր իտէրէք տալանըն եհնիտէն պա-զըլմամասընա էֆքեար պէյան իթ-միշ իտի։ շիմտի տախի մէզըլար էվրազը ալիլլէ նազըրը թէտղըր իթմէքտէ տիր։ պիլալիլէր մէճ-լիսի վիւքէլա մէզքիւր տալանըն եհնիտէն պազըլուպ, պազըլու-մամասը հազգընտա պիլ միւլէ-քէրէ գարարընը վէրէճէք տիր։

Մալիւմ օլաղը իւզըն Տրէյ-ֆիւսըն միւսթիլլէթինէ էն գուլ-վէթլի հէօճէթ օլան մէքթուպըն սաթիլլէլի մէյտանա չըգտըր։ հա-նի միւրալալ Հանի օլ սաթիլլէ մէք-թուպը քէնտիսի հազմը օլաղընը իթիլալ իթմիշ վէ քէնտի քէն-տիսին տէ էօլտիւրմիւշ տըր։ Ֆա-գաթ եհնիտէն տալա պազըլըր ի-սէ, պիր չօգ պաշգա մէմուրլա-րըն սաթիլլէլի վէ խըյանէթիկ-շէրիք օլաղըլարը մէյտանա չըգա-ճաղընտան, հէրսինէ պէտէլ Տը-րէյֆիւսի ֆէտա իթմէք թարիլի-նի միւնասիպ կէօրիյօրլար։

Տէմէք շու սաղըրտա մէտէնիլլէթ մէնպասըր առտ օլընան Բարիստէ տախի առալէթ ու հազգանիլլէթի սէթը իթմէք իշին չալըլալարըն մըգտարը առտի վէ հազշինալար-տան բէք զիյատէ տիր։ առալէթի մէյտանա չըգալմայա չալըլան գա-վալը իմիր Չօլայը տախի օլ սէ-պէպտէն մահքիւմ իթտիլլէր։ Ֆա-գաթ՝ էր կէճ առալէթ զալէպէ իտէր։

Ա Ջ Դ

Տօթթ. Մ. վարդանեան պատիւ ունի ծանուցանել իր Յարգալ Բա-ճախորդաց և Հասարակութեան որ իր բնակարանը փոխադրած է Սեպտեմբեր 1 էն սկսեալ, անտա-ռաց վերադասուլ Պր. Մարքօֆին տունը, Չորրորդ թաղ, Թաշ-Շօլի սկիզբը, Սպարաքա փողոց։ Կը գարմանէ ամէն տեսակ հիւանդու-թիւններ, մանաւորապէս ներքին, կանանց, տղայոց և ծննդական գործարանաց։ Կը կատարէ ման-կաբարձութեան ամեն տեսակ գոր-ծողութիւններ, Կ'ընդունի նաև տարեկան բաժանորդագրութիւն։

Ա Ջ Դ

Վաղը կիրակի, առաւօտեան ժամը 9 ին պիտի քարոզէ Պատ-Հայկ Եարտըմեան, Պուլկար բո-ղոքականաց ժողովարանը, նիւթ ունենալով Ճիւնարիտ գործունէո-րեան աղբիւրն։

Отговорникъ М. Сноновъ
Печатица „Взаимность“—Варна